տեղւոյ վննութիւնն և գնացինք պարոն գաւառապետի մօտ հանգստանալ ։

Պ. Իւան Մօսէիչի և նորա ազնիւ Տիկնոջ հիւրասիրութեանը և ուրախութեանը չափ չկար. նոյնպէս և մեր ուրախութեանը, որ մի այնպիսի պատուական բարեկամի (Երեւանցւոյ) հանդիպեցինք այն օտար երկրում ։

Առաւօտեանը՝ ժամերգութեան ժամանակ գնացինք ուխտատեղին, որ գիւղի ծայրին մի վտակի եզրումն է շինուած ։ Դրան ճակատի արձանագիրը կարդալով իմացանք, որ նոյն իսկ մեր հիւրընկալ Տիկին Հռիփսիմէի մայրն էր շինել տուել 1879 թուին։

Մտինք ներս եկեղեցին, առաւօտեան ժամերգութիւնը աւարտեցինք, և ապա կատարեցինք հոգեհանգստեան կարգը վասն փրկութեան հոգւոց այն եկեղեցւոյ ի սկզբանէ հետէ շինողաց և նորոգողաց, և յատկապէս վերջին նորոգող Կաճկաճեանց տոհմի հանդուցելոց, և տեղւոյն և առարկային յարմար սուրբ գրոց խօսքերով մխիթարեցի ունկնդիրներին և հիւրընկալներին, և դուրս գալով եկեղեցուց, սկսեցինք շինութեանը նայել և արձանագիրը կարդալ և օրինակել, որ էր այս օրինակ ։

«Ես տիկին Եղիսաբէթ Կաճկաճեանց կառուցի մատուռս, ի յիշատակ իմ և ամուսնոյս ։

Տէր յիշէ մեզ, երբ բանք սպառին և գործք թագաւորեն ։ Ի 1879 թվ. Քրիստոսի»։

Եկեղեցին մի փոքրագիր շինուած է քարուկրով՝ տանիքը օրոցաձեւ, ունի փոքր սեղան պատարագի ։ Նշանակած օրերը Վարդավառին, Աստուածածնին և սուրբ Խաչին՝ Դարբանդից եկած ուխտաւորաց համար պատարագ է մատուցանում Դարբանդի քահանայն ։

Այս տեղ ըստ հրաւիրանաց գաւառապետին գնացինք մի վերստաչափ հեռու «Պողոս Բուլաղ» անունով հռչակաւոր աղբիւրի մօտ, (ուր և ծառոց հովանեաց տակ ճաշեցինք ։)